տած հատուածների մի մասը բառական փոխառութեան տպաւորութիւն են թողնում—, այնու ամենայնիւ ըստ Պր. Մառի այդ վարքին չէ կարելի իրրև Ագաթանգեղոսի աղբիւր՝ այնքան մեծ նշանակութիւն տալ, ինչպէս այդ կամեցել է ցոյց տալ Հ. Գալուստը։ «Ագաթանգեղոսը նկարագրելով ս. Գրիգորի չարչարանքները, մի դէպքում կարելի է (быть можетъ) օգտուել Գորիա և Շմոնի նմանատեսակ տանջանքների նկարագրութեան մի քանի գարձուածներից» (էջ 4)։ այդ ժամանակ այդ վարքը ոչ թէ պատմութեան աղբիւր է, այլ կարելի է ասել թէ ազդել է պատմագրի ոճի վրայ, և այն էլ ոչ «դարձի պատմութեան», այլ այն խմբագրութեանը, որ այսօր պահուած է։ Համաձայն ենք՝ որ վարքը պատմութեան նիւթի և ծրագրի վրայ առանձին ազդեցութիւն չէ ունեցել, այլ գոյէ «պայմանական»... աղբիւր է այն խմբագրութեան, ինչ որ առաջներս ունէնք» (էջ 4)՝ բայց միթէ՞ Հ. Գալուստեան էլ խմբագրի աղբիւրն չէ որոնում։ այլ է՝ «եթէ ընդունենք, որ Հ. Գալուստի ցոյց տուած նման գարձուածները նոյն գարիշրջանի վարքագրական յիշատակարանների սովորական գործածական ձևեր են»։ Հակառակ դէպքում վարքը հաստատուն կուգան է տալիս «խմբագրի» ժամանակի և լեզուի մասին որոշ կարծիք յայտնելու, ինչ որ արել է Հ. Գալուստը։

Պրոֆ. Մառը վարքի մասին հրատարակչի հետ համակարծիք է, որ «Հայկական Թարգմանական գրականութեան այդ հազուագիւտ յիշատակարանը» ծագում է չորրորդ դարուց, Հայերէն Թարգմանուել է ասորերէնից, և ուելացնում է, թէ վարքը իւր ներկայ վիճակով պահուած յունարէն և հայերէն ուրիշ խմբագրութիւններից ամենահինն է։ Ասորերէն բնագրի ապացոյցներն են. Հայերէնի ասորաբանութիւնները, և մինչև անգամ ս. Գրքի մեքանի վկայութիւնները յիշեցնում են ասորական «Պեշիթօն», կամ շատ կարելի է Թարգմանը ճանաչել է ս. Գրքի Հայերէն առաջին՝ ասորական Թարգմանութիւնը։ Այդ երկու սրբերը փրկչական չորրորդ դարում ծնուում էին Ասորիքում. Եփրեմ Ասորին երգով գովել է նոցա, իսկ նոցա յիշատակին եկեղեցիներ էին կառուցանում։

II.

Ն. Մառ. „Хитонъ Господень въ книжныхъ легендахъ Арменъ, Грузинъ и Сирійцевъ“ „ՅԱՂԱԳՍ ԱՆԿԱՐ ՊԱՏՄՈՒԱՆԻ ՏԵԱՌՆ“. ՀԱՅՈՑ, ՎՐԱՑ ԵՒ ԱՍՈՐՈՑ ԳՐԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՒՄ։ *

Պրոֆ. Մառի այս փոքրիկ ուսումնասիրութիւնը գեղեցիկ լուսաբանութիւններով պարունակում է ամփոփ տեղեկութիւններ Ցիրոջ անկար պատմուճանի այն աւանդութիւնների մասին, որ հնուց ի վեր պահուում էին արևելեան երեք ազգերի՝ Հայոց, Վրաց և Ասորոց եկեղեցիներում։ Քրիստոսի անկար պատմուճանը, որ Աւետարանի խօսքերով անբաժանելի լինելով, վիճակի ընկաւ Ցիրոջ խաչող գինուորների մէջ, ամենահին ժամանակներից թէ արևելեան և թէ մանաւանդ արևմտեան եկեղեցիներում ամենայայտնի սրբութիւններից է համարուել։ Արևելքում միայն Վրացիներն ունէին դրա օրինակը, որ այժմ անցել է Ռուսաց ձեռքը։ իսկ կաթոլիկ եկեղեցին դեռ այսօր էլ «ուղիղ բազմաթիւ օրինակներ» ունի, որ այդպիսի մի մեծ սրբութեան համար ստեղծուէին քրիստոնեաների պարզ միամիտ շրջաններում առասպելախառն պատմութիւններ և աւանդութիւններ, որոնք մի կամ միւս տեղ գրի առնուելով, թարգմանուել և սերունդէ սերունդ մեզ են հասել։ Այդպիսակ պատմութիւնների շրջանառութիւնը զանազան ազգերի մէջ մի մի փոքրիկ օղակ են այն փոխադարձ քաղաքակրթական ազդեցութեան, որ տեղի են ունեցել նոցա մէջ և պատմարանի համար ուսումնասիրելու ամենահետաքրքիր և կարևոր երևոյթներն են։ Այսպէս է ըմբռնում յարգելի գիտնականը իւր շոշափած խնդիրը, ինչպէս տեսնում ենք նրա համառօտ նախաբանից։

«Մենք դեռ շատ հեռու ենք այն ժամանակից, երբ հնարաւորութիւն կունենանք որո-

* *Изъ Сборника статей учениковъ профессора Бар. В. Р. Розена. С. Петербургъ 1897.*

շելու Հայերի և Վրացիների հոգեկան զարգացման սահմանը միացնող օղակի առաջին քայլերը։ Այնքան էլ շուտ չի հասնիլ այն ժամանակը, երբ մեր ձեռին ունենալով քննութեամբ ուղղագրուած և ըստ արժանւոյն գնահատուած փաստեր, կարողանայինք վերջնականապէս որոշել այդ երկու հարևան ազգերի հոգեկան կեանքի գլխաւոր հոսանքները։ Չնայած նոցա իրական ազգային (?) ցեղակցութեանը, որը սակայն շատ վաղ նկատելի կերպով թուլացել է Հայերի արիական ցեղի հետ ձուլուելով,[1] չնայած երկուսի փոխադարձ ազդեցութեանը և այն անընդհատ և բազմակողմանի յարաբերութեանը որ կար նոցա մէջ, Վրացիներն ու Հայերը իրենց պատմական անցեալում ևս ներկայացնում են քաղաքակիրթ ազգերի երկու տարբեր տիպեր։ Անկասկած Հայերի ու Վրացիների մտաւոր աշխարհը վերակազմելու ամենախոշոր գործօնը քրիստոնէութեան հաստատուելն էր երկու ազգերի մէջ. այդ ժամանակի հետ սերտ միացած է այն, որ նոքա աստիճանաբար իւրացնում են քրիստոնէութեան սկզբունքները՝ առաջ միատեղ, յետոյ առանձնացած. այդ ժամանակից է սկսում, որ Հայերի ու Վրացիների մէջ ազգային ինքնագիտակցութիւնը նոյնանում է քրիստոնէութեան հետ, և դրա փոխարէն ազգային սեփականութիւն են դարձնում քրիստոնէական նախնական, ինչպէս նաև ամենաուշ ժամանակների՝ յայտնի աւանդութիւններ, այս կամ այլ ձևի տակ։ Գրականութեան մէջ նկատուած այս երևոյթը իւր ազդեցութեանն է ենթարկել նաև բուն ազգային ստեղծագործութիւնը. և այդ ոչ թէ մեզնակ Հայերի մէջ, որոնք հնուց մշակել են միմիայն կրօնական գրականութիւն, այլ նաև Վրացիների մէջ, որոնք գրական խնդիրներում յաջողում են ազատուել եկեղեցու խնամակալութիւնից և կրօնականին զուգընթաց զարգացնում են նաև աշխարհական գրականութիւն։ Եւ Վրացիների ազգային ստեղծագործութեան մէջ քրիստոնէական աւանդութեան հետ միաժամանակ պէտք է ընդունել նաև պարսկական ազդեցութիւնը, որ երբեմն զբաղեցրած է հանդիսացել։ Վաղ թէ ուշ, անկասկած, կմշակուին գիտնական այժեր, որոնք կարող կլինին լրացնել այդ խնդիրը, թէ ինչպէս քաղաքակրթական փաստերի պատմական երևոյթը աստիճանաբար փոփոխել է յիշեալ ազգերի մտաւոր պատկերը։ Եթէ այդ ուղղութեամբ կատարուելիք աշխատութեան մէջ այս առաջիկայ նկատողութիւնը կծառայի որևէ մանրամասնութեան նկատմամբ, դրա մէջը արդէն նա կգտնէ իւր արդարացումը»։

Այս համառօտ նախաբանից յետոյ նա անցնում է բուն խնդրին։ Տասնուվեցերորդ դարու սկզբներում Ռուսաց դեսպանները հաղորդում են ցարին, որ Պարսից շահը մտադիր է նրան ընծայ ուղարկելու Տիրոջ անկար պատմուճանը. և 1625 թ. Շահարասի դեսպանը, Վրացի Ռուսուամբէկը, պատրիարք Փիլարետին ներկայացնում է թանկագին քարերով զարդարած մի ոսկեայ արկղ, միջում անկար պատմուճանը։ Մոսկվայում կասկածով են վերաբերում մահմեդական իշխանի ուղարկած պարգևի վրայ. այնտեղից դիմում են Ներսէսադէմ և Կ. Պօլսի պատրիարքին և լսում են, որ Վրաստանում իրաւ է կար յիշեալ սրբութիւնը. մինչդեռ Թիհմուրազ թագաւորի դեսպան Թէոդոս արքեպիսկոպոսը բացարձակ կասկած էր յայտնել շահից դեռ ևս սպասելիք նուէրի մասին պնդելով, որ պատմուճանը Վրաստանից չէ տարուել. և այդ բանը մինչև այսօր էլ հաստատում են Վրացիները։ Սակայն մեր Առաքել Պատմագիրը «որ այդ խնդրում որևէ շահ չունի», իրրև կողմնակի անձ պատմում է թէ, Շահարասը Վրաստանը աւերելով և կողոպտելով՝ Պարսկաստան է տարել եկեղեցական շատ թանկագին անօթներ, սրբութիւններ և Անկար Պատմուճանը, և պահում է Սպահանի թագաւորական գանձարանում։ Իսկ յետոյ Ռուսաստան ուղարկուելով դրուել է Ռւսպենսկի մայր տա-

---

1. Սա ևոր ևւ գիտուրեան մէջ չհաստատուած կարծիք է. յայտնի լեզուարան Հիւբշմանի ամենամերձին ճնուորիւններ ցոյց են տուել, որ Հայերը ծագմամբ պատկանում են հնդկա—եւրոպական մեծ ընտանիքի՝ այն էլ առևմտեան ճիւղին. Վրաց հետ ազգակցութիւնը, եւ կամ Հայերի յետոյ արիանալը ևոր ենթադրութիւններ են։ Միայն այս գիտեմ որ պրոֆեսոր այս նիւթի մասին չհրատարակուած ուսումնասիրութիւններ ունի, որոնց մասին նա բանիցս յիշատակել է իւր փորձի աշխատութիւնների մէջ։

ձարում, իսկ մասերը Ալէքսանդրո—Նեվսկու մենաստանում, Ս. Պետերբուրգի արքունական մեծ եկեղեցում և Պետրոս—Պօղոսեան մայր տաճարում։

Այս ընդհանուր տեղեկութիւններից յետոյ Պր. Մառը իմ է ժողովում գրական այն աւանդութիւնները, որ այդ սրբութեան մասին պատմուել են արևելեան քրիստոնեաների մէջ։ Վրաց հնագոյն տարեգրութիւնը, որ պահուած է միայն հայերէն լեզուով (Համառօտ Պատմութիւն Վրաց Վէնետ. 1884) յիշում է, որ պատմուձանը «գտնուում է Մցխեթի քաղաքում»։ իսկ վրացական նոր տարեգրութիւնները կրկնում են նոյն աւանդութիւնը փոքր ինչ տարբեր. և վերջապէս ս. Նունեի վարքի մի վարիացիան ընդհանուր ձևով ասում է, որ պատմուձանը գտնուում է Հայաստանի հիւսիսում, առանց երկրի անուան, մինչդեռ դրա ուրիշ խմբագրութեան մէջ անուններ կան, և Մառի կարծիքով ամենահինը առաջինն է։ Վարքն այսպէս է պատմում։

Մցխեթում ապրում էին Հրէաներ. սոքա իրենց ցեղակիցներից լսելով Յիսուսի գործերը Երուսաղէմում, ընտրում են իրենց միջից մէկին՝ Էլիոզին (Ելիոզ), որ գնա օգնի Յիսուսին կործանելու։ Էլիոզի մայրը խնդրում է որդուն զգոյշ լինել Յիրոյը ձեռք տալու, իսկ քոյրը չտեսած հաւատալով Յիսուսին, խնդրում է վերադարձին Նրանից մի յիշատակ բերել։ Էլիոզը հասնում է Երուսաղէմ։ Հանդիսատես է լինում Յիսուսի խաչելութեանը և վերջը ձեռք բերում Նրա պատմուձանը։ Պատմուձանը նա տալիս է իր քրոջը. սա իր կրծքին սեղմած այդ սուրբ նշխարը, սկսում է արտասուել և աւանդում է հոգին։ Երկրի թագաւորը՝ Ադրեկը կամենում է խլել պատմուձանը, բայց մեռածը ամուր սեղմել էր կուրծքին. ուստի Էլիոզը թաղում է քրոջը պատմուձանի հետ միասին, իսկ գերեզմանի վրայ իսկոյն աճում է մի նոճի։

Ահա թէ ինչ ձանապարհով է Քրիստոսի անկար պատմուձանը բերուել Վրաստան և թէ որտեղ է պահուում։ Պր. Մառը համառօտ ծանօթացնում է Նունեի վարքի ուրիշ խմբագրութիւնների հետ էլ, որոնց մէջ դեր են խաղում Արիմաթիա քահանայի Սիդոնիա աղջիկը կամ ինքը քահանան, որը Երուսաղէմ է գնում Լոնգինոս Կարսնեցու հետ (Longinos Karsneli)։ Լոնգինի անունը պատահաբար չէ մտել այդտեղ, այլ յիշեցնում է Ղուկիանոս Հարիւրապետին, որ Յիսուսին խաչող զինուորներից մէկն էր և որը վերջը հաւատաց ու նահատակուեց։ Ինչպէս աւանդում են այդ սրբի գանազան ձևերով պատմուած վարքերը՝ յունարէն, հայերէն և ասորերէն լեզուներով։ Իսկ Միքայէլ Ասորու պատմութեան հայերէն թարգմանութեան մէջ ասուած է. «իսկ յաղագս անկար պատմուձանին Յեսուն ասէ սուրբն Եփրեմ թէ արկին վիճակս զինուորքն վասն չպատառելոյ և ել վիճակն ի զինուոր մի, որ ընդ ձեռամբ Ղուկիանոսի, և առ զնա Ղուկիանոս հարիւրապետն և երեք զնա յաշխարհն Գաղատացւոց ի քաղաքն իւր ի Մոքսոն[1] և պատուի անդ մինչև ցայսօր։

Եւ միւս հարիւրապետն Ղաղիկեցին երեք զիւր մնան հանդերձին ի քաղաքն իւր Փուգ, ի մայրաքաղաքն Նգերացւոց, և արկեալ ի պատանդ ապակեղէն կախեալ կայ յեկեղեցին, անհպելի յամենեցունց, խուփ եդեալ բերան ապակոյն, և տեսանի յամենեցունց։ Եւ զայս պատմուձան անկար հիւսեաց քոյրն Արգարու և առաքեաց Յեսուն մերոյ ի ձեռն Անանիայ սուրհանդակի»։ Այստեղ պատմուձանը միաժամանակ երկու տարբեր անձանց է տրւում։ Ակներև է որ երկու աղբիւրներ միացած Միքայէլ Ասորու տարեգրութեան մէջ, որոնց բնագրերը դեռ յայտնի չեն։ Պր. Մառի թուած այս վկայութիւնների վրայ մէկն էլ կամենում եմ ես աւելացնել, որ գտել եմ նեղքև հրատարակելիք մի փոքրիկ յիշատակարանի մէջ։ Պարէգօան և պատառառակալն և զանկար պատմուձանն Արգարու թագաւորի Մաանէոս Աւետարանչի տարեալ ի յԱրաբիայ Միաթա որ կղզի է և կայ մինչև ցայսաւր»։ Միւս յիշատակարանների հետ ընդհանուր է Արգարի յիշատակութիւնն և մասամբ Միաթայ անուան նմանութիւնը Մծխեթայ և Մոքսոն կամ Մաքսոն անուններին։

Մինչ դեռ այս պատմութիւնները ցոյց

1. Պարիզի Ձեռ. Մաքսոն։

են տալիս թէ յիշեալ քրիստոնէական մեծ սրբութիւնը ինչ տեղեր է տարուել և ինչպէս է ձեռքէ ձեռք հասել, հայերէն և ասորերէն լեզուներով պահուած կան աւանդութիւններ, թէ ինչ ծագում է ունեցել այդ պատմուճանը և ում ձեռքով է Յիսուս ինքը պարգեւ տացել։ Այս աւանդութեան հայերէն երկու՝ ընդարձակ և համառօտ, խմբագրութիւն կան։ Առաջի գրուածքի վերնագիրն է. «Ցեառն Յոհաննու Ոսկերբերանի ասացեալ վասն անկար պատմուճանին Ցեառն, որ ի վերուստ իջեալ, և պատմութիւն Թագաւորին Հայոց Աբգարու», և որը առաջերէն թարգմանութիւնով ու ծանօթութիւններով հրատարակել է Պր. Մառը, առնելով Վիեննայի Մխիթարեան վանքի երկու ձեռագրերից (№ 7 և 73)։ Այդ առաջաբանում գրութեան մէջ, որ անհիմն կերպով վերագրուել է Յոհան Ոսկերբերանին, պատմուած է հետևեալը.

Աշխարհ է գալիս Փրկիչը և սկսում քարոզել ու հրաշքներ գործել. այդ ժամանակ Ուրհայի Աբգար Թագաւորը հիւանդանալով կամենում է տեսնել Նորան. նա հրամայում է Ադդէ կերպասագործին Յիսուսի համար իրրև ընծայ թագաւորական զգեստ պատրաստել. սա հրաժարւում է, մարդ հոգուդէն գիա՞րդ կարէ կազմել զգեստն Աստուծոյ։ Մինչ օտար վաճառականներ բերէին գանկար պատմուճանն և զծի-«բանին և եռուն ընծայս Թագաւորին Աբգարու», վաճառականները պատմում են որ այդ բանները իրենք Հովիւներից են գնել. Թագաւորի հրամանով կանչւում են Հովիւները, իսկ սոքա էլ ասում են թէ իրենք զգեստը ստացել են դաշտի մէջին Հրեշտակներից, և նոյնպէս Թագաւորին են տալիս վաճառականներից ստացած արձաթը։ Թագաւորը Ադդէի և Ապահունեաց տէր Անանէի ձեռքով զգեստն ու արձաթը ուղարկում է Յիսուսին, պատուիրելով Նորա պատկերը բերել, որով ինքը կառողջանայ. գեսպանները կատարում են նրա հրամանը։ Յիսուս զգեստը հագնում է, իսկ արձաթը ուղարկում է քահանայապետներին, որը յետոյ իւր արեան գինն է դառնում։ Այդ արձաթի մասին Յիսուս պատմում է աշակերտներին, թէ «զայս արձաթս գործեաց Թարայ Հայրն Աբրահամու», և թէ ում ձեռքն է հասել և թէ ում ձեռքն է հասել և թէ վերջը իւր արեան գինն է դառնալու։ Յիսուսին խաչում են. Աբգարը նամակ գրելով Հերովդէսին Թոլետուբիէն է տանում Հրէաներին պատժելու. և մինչդեռ գօրքով մտած Հրէաստան անխնայ կոտորում էր ժողովրդեան, Յիսուս նրա մեծ հաւատը վարձատրելու համար, առաջօք երևում է նրան ասելով, ես եմ որին չտեսած հաւատացիր։

Այդ պատմութեանը ազգային գոյն է տուած. Հայ Աբգար Թագաւորը մեծ դեր է խաղում, սակայն դա Հայ գրողի յաւելուածն է և պատմուածքի երկրորդական մասն է կազմում. գլխաւոր էական կէտերը սոքա են, որոնց իսկական արբիւրը ասորերէնի մէջ կայ։

1. Հրեշտակները պատմուճանը յանձնում են Հովիւներին, 2. Վաճառականները գըտնում են այն արձաթը, որով Յուդան վաճառում է Յիսուսին, 3. Աբգարը Փրկչին ուղարկում է թէ պատմուճանը և թէ արձաթը և 4. այդ արձաթի պատմութիւնը։ Ասորերէն բնագիրը գտնում է Գիրք մեղուի (Книга пчелы) գրուածքում, ունի գլխաւոր կէտերի տարբեր դասաւորութիւն (4, 2, 1 և 3) և մի քանի շեղումներ մանրամասնութեանց մէջ, ինչպէս երևում է Պր. Մառի տուած թարգմանութիւնից։ Ասորերէնի հեղինակն է Նեստորական Սոզոմէն եպիսկոպոսը, ծագումով Հայոց Ղալթ քաղաքից, որը ապրում էր ԺԲ-ԺԳ դարում։ Նա էլ մի ասորական աւելի հին բնագրից է վերցրել, իսկ թէ Հայերէնը երկուսից որից է օգտուել՝ դժուար է որոշել։

Ահա այս փոքրիկ, առանձին վերցրած ըստ երևոյթին աննշան գրական յիշատակարաններով Պր. Մառը ցոյց է տուել այն գրական — քաղաքակրթական մեծ շղթայի մի օղակը, որով քրիստոնէութիւնը տարածուելուց յետոյ շղթայուած էին արևելքի փոքրիկ քրիստոնեայ ազգերը։ Այդ Աթոռի մատենադարանում քանիցս մեզ հանդիպել է Մառի հրատարակած Հայերէն բնագրի օրինակներ. առանձին չենք նշանակել, իսկ յուցակները նորից քըքրելու յարմարութիւն չու-

նինք. դրա փոխարէն հրատարակում ենք մի փոքրիկ բնագիր նոյն նիւթի մասին տարբեր բովանդակութեամբ, որի օրինակը մեր ձեռքն ընկաւ յօդուածը կարդացած օրը։ Դէորգ կաթուղիկոսի ժողոված ձեռագրերի համարը 11-ն է թղ. 25-ա»։***

Պատմութիւն ս. Գեղարդեանն եւ այլ անօրինականացն Քրիստոսի։

«Վասն սուրբ և փրկական անօրինականացն սրբութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ այսպէս գտաք ի գործոց ոսկեգրով ի պատմագիրք թագաւորութեան ի քաղաքն Կոստանդինուպոլիս և այսպէս պատմեցաւ։ Ժորժամ առին զթագաւորութեան քաղաքն՝ մեծ թագաւորն Փռանկաց բացեալ զմեծ եկեղեցին զսուրբն Սոփիայ։ Եւ մեծ պարսաւանօք էին զամենայն քաղաքն և պատրիարգն. և զնախաբարս սուրբ եկեղեցւոյն և խնդրէր զփրկական սրբութիւնս. և նոքա զոր ունէին ցուցին. և ապա բերին զմեծ գործոցին պատմարանն և էր այսպէս գրեալ։

Պատմուճանն աստուածային որ փոր անկեալ էր ամենևին և զարգիոն նախորան տուեալ սբ. առաքելոցն Շիղա և Տիմոթիայ. և նոցա տարեալ ի Սելևկիայ[1] կղզին և կայ մինչև ցայսօր։

Պարէգօտն և զպաստառակալն և գանկաթ պոպոնաճանն Արգարու թագաւորի Մաահէոս Աւետարանչի տարեալ ի յԱրաբիա Միխթայ[2] որ կղզի է և կայ մինչև ցայսօր։

Զքղամիթն կարմիր և գերկու մասն պըսակին փշոց առաքեալն Մարկոս տարեալ Սպանիա ի Վէնետիկ[3] քաղաք։

Զկենսաբեր[4] նափորան և զմին բևեռն և զկաստն որ կոչի աքցան և զվարշամակն որ ոչ կայր ընդ այլ կտաւան, այլ ուրուն ծալեալ ի մի կողմն տարեալ՝ զայն երկիրն Նաւեաց որ այժմ ասի Համշէն Մեծ մծտ ի Ճանկէթ և ի Տրապիզոն քաղաքն։ Նդին առաքեալքն ի բարձրագիտակ լերին. և ամպ և մէգ շուրջ է զնովաւ զոր ոչ ոք կարէ ելանել և մտանել ի նա մինչև ցայսաւր։

Ինկ զարգի պատառակն Տեառն որ կապեալ ի վերայ խաչին էր որ արեամբ թացաւ, որ ոչ ոք կարաց հասանել ի ներս զի որ մերձենայր հրով այրէր։ Զայս Ցոհաննէս աւետարանիչն ունէր և տարաւ ի Ցակիսա[5] կղզին Ցոկաս քաղաք և կայ ի նմին։

Աստուածամաւր պատմուճանն և ծիրանին յՈրմնական կղզոյն կա. խանձարուրն ի Հռոմ քաղաք կայ. մոգարեր հանդերձն արքայութեան ի Սելևկիա[6] կղզոյն յԱսական քաղաք կայ։

Սուրբ սեղան վերնատանն և դենճակն և այլ սպասքն ի Կոստանդինուպոլիս է. ձիաւորեալ բևեռն որ է ոսին և սուրբ ձեռացն՝ ի նոյն թագաւորանիստն է։

Զարման ալիոռն որ է ծորն և պատառ խնկոցն ի Ցարակաս կղզոյն Նորկադիայ քաղաքն կայ։

Հայրական տուեալ զգիրն կենաց անբաց և անընթեռնուլ զոր առեալ սրբոյն Պետրոսի տարեալ Ցարակիա կղզին ի Ցարիոց[7] քաղաք. զոր սուրբն Բագրատ գարձոյց և զծին կուռան խորտակեաց և կայ անդ. Դ զինուորի գեղարդն որ զկողոյ փրկական աղբեր արեանն Ն֊հեղ զոր առեալ Ղաւնկիանոսի որ կոյր էր ի ծնէ. հաւթեալ ի կողմն փրկչական առժամայն լուսաւորեցաւ կայ ի Գեղարդ։

Աստուծոյ արեամբ ներկեալ սուրբ գեղարդն

---

* Նշանակում ենք միայն թիւ 491 բոս նոր ցուցակի էջ. 151 «Տեառն Ցոհաննու Ոսկեբերանի ասացեալ ի պատմուճան Տեառն» Ձեռ. գրուած ի 1618 թուին. եւ ձառընտիր թիւ 937 (4) էջ. 124 բ. «Պատմութիւն հանդերձից Տեառն եւ դասատակին եւ պատկերին սուրբ Ցոհաննայ», գրուած Հայոց Ջե փրկ. 1456 թուին։

** Յուշակագրութեան շարունակութեան մէջ հանդիպեցինք երկու ուրիշ օրինակի եւս թիւ [Բ] 400 էջ. 147. եւ [Գ] 420 էջ. 487 ուր վերնագիրն է. «Վասն սնօրինականաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Այսպէս գտաք ի պատմագրացն . . » Առաջինը գրուած է 1663 թուին, երկրորդը 1692 թուին։ Ձեռագրերիս տարբերութիւններն որ խիստ շատ կին՝ թէեւ պատրաստած, մեզնից անկախ պատճառով չկարողացանք նշանակել, բաւականացանք ընթերցուածները արտագրելով։

1. Գ. ի Սիլիկիա ի կղզին։

2. Բ. Միխթաց։ 3. Գ. ի Ասպանի եւ ապա թերին Վէնետիկ։ 4. Գ. Ջերմափորտն. Բ. զերկնաբեր։

5. Գ. Անիսս։ 6. Ա. Լեսբիկիա։ 7. Գ. ի Աբիոց։